



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոս 2011թ.

թիվ 47-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ԱՆՑԿԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕՏԱՐԵԿԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԾԱՌԱՅՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ
ՀԱՄԱՏԵՂ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 9-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման և մարդահամարի հարցաթերթի լրացման ուղեցույցը» համաձայն հավելվածի:

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

**Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ
օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական
ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի
Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի
անդամների հաշվառման և մարդահամարի հարցաթերթի լրացման**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **4-րդ հոդվածի** համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի **թիվ 301-Ն** որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկանցնել **2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը** ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի անցկացման համար մարդահամարի հաշվառման (կրիտիկական) պահ է սահմանվել մարդահամարի առաջին օրվա՝ **հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը՝ 00⁰⁰ ժամը**: Այսինքն՝ մարդահամարի հարցաթերթի լրացման ժամանակ հարցադրումները պետք է կատարել միննույն հստակ սահմանված պահի, որը հաշվառման իմաստով կոչվում է **հաշվառման (կրիտիկական) պահ**, դրությամբ:

Անհատներին վերաբերող այն իրադարձությունները, որոնք տեղ են գտել հաշվառման պահից հետո չպետք է հավաքագրվեն, այսինքն՝ մարդահամարի հարցաթերթում **չպետք է ներառվեն այդ պահից հետո ծնված երեխաների վերաբերյալ տվյալները**, ովքեր դեռևս ծնված չեն եղել կրիտիկական պահի դրությամբ, և **պետք է ներառվեն նշված պահից հետո մահացած անձանց վերաբերյալ տվյալները**, ովքեր դեռևս **ողջ են եղել այդ պահի դրությամբ**:

3. Սույն հրահանգում օգտագործված տերմինները կիրառվում են միայն մարդահամարի փաստաթղթերի լրացման նպատակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետները և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամները մարդահամարի ժամանակ հաշվեգրվում են իրենց գտնվելու երկրներում՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունների և հյուպատոսությունների **դեկավարների կողմից**, իսկ Հայաստանում՝ իրենց մշտական բնակության վայրում, նրանց վերաբերյալ տվյալներ մարդահամարի հարցաթերթում չեն լրացվում:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Մարդահամարի հաշվառման միավոր է հանդիսանում **տնային տնտեսությունը**, որի միջոցով իրականացվում է բնակչության հաշվեգրումը, այսինքն՝ յուրաքանչյուր տնային տնտեսության համար լրացվում է մարդահամարի առանձին հարցաթերթ:

2. Մարդահամարի հարցաթերթի հարցերն անհրաժեշտ է ուղղել հարցվողին անվանական (անունը)՝ ճիշտ այնպես, ինչպես դրանք գրված են հարցաթերթում: Մարդահամարի հարցաթերթում բոլոր գրառումներն անհրաժեշտ է կատարել գնդիկավոր գրիչով: Այն հարցերը, որոնք ունեն հնարավոր մի քանի պատասխաններ, բերված են *տվյալ հարցի համար նախատեսված սյունակից ուղղորդված սլաքի ուղղությամբ տեղակայված վանդակում*: Հարցերի պատասխանները լրացվում են բառեր կամ թվեր (հնարավոր պատասխանի համապատասխան ծածկագիրը) գրելով:

3. Հարցաթերթի բոլոր հարցերի պատասխանները լրացվում են միայն տվյալ հարցի համար նախատեսված սյունակի սպիտակ (անգույն) հատվածում:

4. Մուգ գույնով առանձնացված գոտիներում գրառումներ կատարել չի թույլատրվում, քանի որ դրանք նախատեսված են հարցաթերթի հետագա մշակման (ծածկագրման) համար:

5. Մարդահամարի հարցաթերթի ոչ ճիշտ լրացված գրառման վրա պետք է խնամքով մեկ գիծ քաշել և գրել ճիշտը:

1. ՀԱՍՑԵԱՄԱՍԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Մարդահամարի հարցաթերթի լրացումը սկսվում է հասցեամասից:

Առաջին հերթին լրացվում է Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսության բնակելի միավորի ամբողջական հասցեն, իսկ մարդահամարի հարցաթերթի համարը լրացվում է հերթական հաջորդականությամբ:

Հարցաթերթի անհատական տվյալների լրացման բաժինը նախատեսված է 7 մարդու համար (տողերը մեկ հարցաթերթում), և եթե որևէ տնային տնտեսությունում բնակվողների թվաքանակը գերազանցում է 7-ից, ապա հարցաթերթի նույն համարով կազմվում է անհրաժեշտ քանակով երկու և ավել հարցաթերթեր: Առաջին հարցաթերթի վրա՝ համարից հետո, պետք է գրվի «Ա» տառը, երկրորդի վրա՝ «Բ», օրինակ՝ Հարցաթերթ N 1 Ա, Հարցաթերթ N 1 Բ և այդպես շարունակ: Նման դեպքերում հարցաթերթի հասցեամասը լրացվում է կազմված բոլոր հարցաթերթերի վրա: Ընդ որում, տեղամասերի՝ մարդահամարի, հրահանգչական և հաշվային, համարները չեն լրացվում:

2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Եթե տնային տնտեսությունը բաղկացած է 8 և ավել անձանցից, այսինքն կազմվել է մեկից ավելի հարցաթերթ, ապա այն լրացնելիս հաջորդ հարցաթերթի հերթական համարակալման համար նախատեսված Ա սյունակում պետք է ճշգրտել համարակալման հաջորդականությունը: Տնային տնտեսությունում հաշվեգրման ենթակա յուրաքանչյուր անձի վերաբերյալ անհատական տեղեկությունները լրացվում են այդ անձի անվանը համապատասխանող տողով:

Սույն ուղեցույցը ՀՀ 2011թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգը սահմանող հրահանգի (հաստատված ՀՀ ՎՊԽ 09.07.2011թ. թիվ 35-Ա որոշմամբ) հակիրճ տարբերակն է, որը մշակված է *Օտարերկրյա պետություններում* Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների մարդահամարի հարցաթերթը լրացնելու համար և առանձնացված մոտեցումները սահմանված են զուտ վերոնշյալ կարգավիճակի անձանց համար:

Հ Ա Ր Ց 1.

ԹՎԱՐԿԵՔ ԽՆԴՐԵՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ ՁԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ(ՆԵՐ)Ի (ՆԵՐԿԱ ԵՎ ԲԱՑԱԿԱ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ

Գրառվում են տվյալ տնային տնտեսությունում բնակվող, հաշվառման ենթակա բոլոր անձանց վերաբերյալ տվյալները:

Յուրաքանչյուր տնային տնտեսությունում առաջինը պետք է գրառվի տնային տնտեսության անդամների կողմից որոշված չափահաս անդամներից մեկի անվանական տվյալները, այնուհետև՝ մնացածներինը:

Ընդ որում, անհրաժեշտ է պահպանել տնային տնտեսության անդամների տվյալների գրառման հետևյալ հաջորդականությունը.

1) ամուսնական զույգի՝ ամուսնու և կնոջ վերաբերյալ տվյալները գրվում են իրարից հետո,

2) զավակների (ներառյալ չամուսնացած մեծահասակ երեխաների), ինչպես նաև խնամակալության տակ գտնվող երեխաների տվյալները գրվում են իրենց ծնողներից/ խնամակալներից հետո:

Տնային տնտեսության անդամների անվանական տվյալ-ները գրառելուց հետո հաշվարարը տվյալ սյունակի ներքևում տեղադրված **«ընդամենը»** վանդակում լրացնում է տնտեսությունում հաշվեգրվածների ընդհանուր թվաքանակը:

Եթե տնային տնտեսության անդամների թվաքանակը 7-ից ավել է, և կազմվել են մեկից ավել հարցաթերթեր, ապա հաշվեգրվածների հանրագումարը «ընդամենը» վանդակում լրացվում է կազմված վերջին հարցաթերթում:

Հ Ա Ր Ց 2.

**ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՆ՝
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԼՈՒՅՍ 12-Ի 00⁰⁰ ԺԱՄԻՆ, (անունը) ԵՂԵԼ Է՝
ՄՇՏԱՊԵՍ ՆԵՐԿԱ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱ, ԲԱՑԱԿԱ**

Այս հարցի պատասխանը տնային տնտեսության անդամների ցուցակում գրված յուրաքանչյուր անդամի համար լրացվում է մշտապես ներկա՝ «1», տարբերակը:

Հ Ա Ր Ց 7 (ա, բ).

«Սյունակ 7ա»

ԻՆՉ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ (ԽՆԱՄԻԱԿԱՆ) ԿԱՊԻ ՄԵՁ Է (անունը) ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆԸ ԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՀԵՏ

Այս հարցի պատասխանը լրացնելու համար պետք է օգտվել «7ա» հարցի համար նախատեսված սյունակից ուղղորդված սլաքի ուղղությամբ առկա վանդակում ներկայացված հնարավոր պատասխանների հուշումներից և դրան համապատասխանող թվային ծածկագիրը գրել տվյալ անձի համար նախատեսված տողում:

Տնային տնտեսությունում առաջինը գրված անձի համար գրվում է «01» ծածկագիրը, իսկ տնային տնտեսության մյուս անդամների համար գրվում է նրա հետ տվյալ անձի ազգակցական կապին համապատասխանող ծածկագիրը՝ ըստ բերված հուշումների:

Օրինակ՝ եթե հարցվողը հանդիսանում է տնային տնտեսությունում առաջինը գրված անձի աղջիկը, ապա անհրաժեշտ է գրել «Դուստրը, որդին» հուշման տարբերակին համապատասխանող «03» ծածկագիրը: Եթե երեխան տվյալ տնային տնտեսությունում

գտնվում է առաջինը գրված անձի խնամակալության տակ, ապա նրա համար գրվում է այդ կապին համապատասխանող «04» ծածկագիրը:

«Մյունակ 7բ»

Նշել մոր (հոր) հերթական համարն ըստ «Ա» սյունակի

Տնային տնտեսությունում ծնողների հետ բնակվող յուրաքանչյուր անձի համար (անկախ տարիքից, ինչպես նաև ամուսնական կարգավիճակից) «7բ» սյունակում հաշվարարը գրում է հարցաթերթի «Ա» սյունակում այդ անձի մոր (հարազատ կամ խորթ) անվանը համապատասխանող հերթական համարը:

Այն դեպքում, երբ տնային տնտեսության կազմում տվյալ անձի մայրը թվարկվածների մեջ չէ, սակայն այդ ցանկում է հայրը, գրվում է հոր հերթական համարը:

Եթե տնային տնտեսության կազմում չեն տվյալ անձի ոչ մայրը, ոչ հայրը, ապա այս սյունակը չի լրացվում:

Հ Ա Ր Ց 9 (ա, բ, գ, դ).

Ո՞ՐՆ Է (անունը) ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ, ԱՄԻՍԸ, ՏԱՐԵԹԻՎԸ

Այս հարցի պատասխանի լրացման համար նախատեսված է 4 սյունակ: «9ա» սյունակում գրվում է **ծննդյան օրը**, «9բ»-ում՝ **ամիսը** և «9գ»-ում՝ **տարեթիվը**:

Օրինակ, եթե հարցվողը ծնվել է 1954թ. օգոստոսի 25-ին, ապա «9ա» սյունակում անհրաժեշտ է գրել 25, «9բ» սյունակում՝ 08, իսկ «9գ» սյունակում՝ 1954:

9ա	9բ	9գ
<u>25</u>	<u>08</u>	<u>1954</u>

Սյունակ «9դ»-ում՝ Տարիքը՝ լրացած տարիներով

Ծննդյան տարեթիվը գրելուց հետո, որոշվում է անձի տարիքը լրացած տարիներով և գրվում «9դ» սյունակում:

Վերը բերված օրինակի դեպքում գրվում է «57»:

Մեկ տարեկանը չլրացած երեխայի համար «9դ» սյունակում գրվում է «0»:

Ուշադրություն՝ մարդահամարի հարցաթերթի «Տնային տնտեսությանը տրվող այլ հարցեր» բաժնում նախատեսված է վերջին 12 ամիսների ընթացքում տնային տնտեսությունում արձանագրված ծնունդների վերաբերյալ հարց, որը պարտադիր պետք է լրացվի այն տնային տնտեսությունների համար, ում կազմում կան մինչև մեկ (0) տարեկաններ:

Հ Ա Ր Ց 10.

Ո՞ՐՆ Է (անունը) ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

10-րդ հարցի պատասխանի լրացման համար նախատեսված է երկու տող:

Եթե հարցվողը ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, ապա հարցի պատասխանի գրառման համար նախատեսված առաջին տողում գրվում է ՀՀ համապատասխան մարզի անվանումը (օրինակ՝ Վայոց ձոր, Շիրակ և այլն), իսկ երկրորդ տողում՝ համապատասխան բնակավայրի անվանումը:

Օրինակ՝

Վայոց Ձոր
ք. Վայք

Եթե հարցվողը ծնվել է արտերկրում, ապա առաջին տողում գրվում է տվյալ երկրի անվանումը (օրինակ՝ «Վրաստան», «Ռուսաստան», «Հունաստան», «ԱՄՆ» և այլն), իսկ երկրորդ տողը չի լրացվում:

Հ Ա Ր Ց 11.

Ո՞ՐՆ Է (անունը) ՔՄԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ(ՆԵՐ)Ը

11-րդ հարցի պատասխանի լրացման համար նախատեսված է երկու տող: Եթե անձն ունի միայն մեկ երկրի քաղաքացիություն, ապա լրացվում է միայն առաջին տողը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար առաջին տողում գրվում է Հայաստան (կամ ՀՀ), իսկ այլ երկրների քաղաքացիների համար՝ այն պետության անվանումը, որի քաղաքացին նրանք հանդիսանում են, օրինակ՝ «Գերմանիա», «Ռուսաստան», «Լիբանան» և այլն:

Երկու քաղաքացիություն ունեցող անձանց համար լրացվում են նախատեսված երկու տողերը:

Հ Ա Ր Ց 12.

Ի՞ՆՉ ԱԶԳՈՒԹՅԱՆ Է (անունը) ԻՐԵՆ ԴԱՍՈՒՄ

Այս հարցի պատասխանը լրացնելու համար հաշվարարն օգտվում է 12-րդ հարցի համար նախատեսված սյունակից ուղղորդված սլաքի ուղղությամբ առկա վանդակում՝ որպես հնարավոր պատասխաններ թվարկված ազգությունների ցանկից և դրան համապատասխանող թվային ծածկագիրը գրում տվյալ անձի համար նախատեսված տողում: Եթե հարցվողի ազգությունը թվարկված ցանկում ներառված չէ, ապա հարկ է գրառել «Այլ» հուշմանը համապատասխանող «14» ծածկագիրը:

Այս հարցի պատասխանների ցանկում նախատեսված է նաև «15» ծածկագիրը՝ «Հրաժարվում է պատասխանել», այն անձանց համար, ովքեր կհրաժարվեն դրան պատասխանել:

Երեխաների ազգությունը որոշվում է ծնողների կողմից:

Հ Ա Ր Ց 13 (ա, բ).

Ո՞ՐՆ Է (անունը) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈ՞Ք ԱԶՍՏ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ Է ՈՐԵՎԷ ԱՅԼ ԼԵԶՎԻ

13-րդ հարցը, որը բաղկացած է երկու մասից, և պատասխանների լրացման համար նախատեսված է 2 սյունակ, ունի հնարավոր պատասխանների միևնույն ցանկը, որը տեղակայված է հարցի համար նախատեսված սյունակից ուղղորդող սլաքի ուղղությամբ առկա վանդակում:

Հաշվարարը հարցաթերթում տվյալ անձի համար նախատեսված տողի «13ա» սյունակում հարցվողի մատնանշմամբ գրում է անձի մայրենի լեզվին համապատասխանող ծածկագիրը՝ օգտվելով որպես հնարավոր պատասխաններ թվարկված լեզուների ցանկից:

Եթե հարցվողը դժվարանում է նշել իր մայրենի լեզուն, ապա պետք է գրել այն լեզուն, որին նա բոլորից ավելի լավ է տիրապետում կամ որը սովորաբար օգտագործում է իր ընտանիքում:

Դեռևս խոսել չկարողացող երեխաների մայրենի լեզուն որոշվում է ծնողների կողմից: Խուլերի և համրերի մայրենի լեզուն համարվում է այն լեզուն, որով նրանք կարդում և գրում են, կամ որը գործածվում է նրանց տնային տնտեսությունում, կամ որով նրանք առավելապես շփվում են այլ անձանց հետ:

Հաշվարարը հարցաթերթում տվյալ անձի համար նախատեսված տողի «13բ» սյունակում գրում է այն լեզվի թվային ծածկագիրը, որին, բացի իր մայրենի լեզվից, անձն ազատ տիրապետում է, այսինքն՝ կարող է տվյալ լեզվով կարդալ, գրել և ազատ խոսել, կամ միայն ազատ խոսել: Եթե հարցվողը ազատ տիրապետում է մեկից ավելի լեզուների, ապա «13բ» սյունակում պետք է գրել միայն մեկ լեզվին համապատասխանող ծածկագիրը, որին նախապատվություն կտա հարցվողը:

Եթե հարցվողը չի ցանկանում պատասխանել, թե որն է համարում իր մայրենի լեզուն, ապա նախատեսված առաջին սյունակում նշում է «Հրաժարվում է պատասխանել» տարբերակին համապատասխանող «19» ծածկագիրը:

Եթե հարցվողը բացի մայրենի լեզվից ոչ մի այլ լեզվի չի տիրապետում **«13բ»**, այունակում նշվում է **«Չի տիրապետում»** տարբերակին համապատասխանող **«20»** ծածկագիրը:

Հ Ա Ր Ց 14.

ՀԱՄԱՐՈՒՄ Է ԱՐԴՅՈՔ (անունը) ԻՐԵՆ ՈՐԵՎԷ ԿՐՈՆԻ, ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՍ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՐԴ

Յուրաքանչյուր ոք ինքն է որոշում իր **կրոնական դավանանքը**, հետևաբար հաշվարարը պետք է այս հարցի պատասխանը հնարավորինս անհատապես պարզի յուրաքանչյուր հարցվողից:

Այն լրացնելու համար հաշվարարն օգտվում է 14-րդ հարցի համար նախատեսված այունակից ուղղորդող սլաքի ուղղությամբ առկա վանդակում որպես հնարավոր պատասխաններ թվարկված կրոնական ուղղությունների ցանկից և դրան համապատասխանող թվային ծածկագիրը գրում տվյալ անձի համար նախատեսված տողում:

Եթե անձը իրեն համարում է կրոնական որևէ ուղղության հետևորդ, ապա հաշվարարը գրում է 14-րդ հարցի պատասխանների ցանկում թվարկված «01»-«16» ծածկագրերից որևէ մեկին համապատասխանող նիշը՝ ըստ ստացված պատասխանի.

«01»՝ Հայ Առաքելական, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր իրենց համարում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ:

«02»՝ Կաթոլիկ, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն, որ դավանում են կաթոլիկ ուղղությանը:

«03»՝ Ուղղափառ, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր իրենց համարում են ուղղափառ ավանդույթի՝ Ռուս Ուղղափառ, Վրացական Ուղղափառ, Հույն Օրթոդոքս և այլ ուղղափառ եկեղեցիների հետևորդներ:

«04»՝ Նեստորական (ասորի), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն, որ հանդիսանում են արևելքի մեկ այլ քրիստոնեական՝ նեստորական ուղղության հետևորդներ:

«05»՝ Ավետարանական, **«06»՝ Եհովայի վկա**, **«07»՝ բողոքական**, **«08»՝ Մորմոն**, **«09»՝ Մոլդկան**, ծածկագրերը համապատասխանաբար գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն, որ հանդիսանում են թվարկված ուղղություններից որևէ մեկի հետևորդ:

«10»՝ Շար-ֆադիական (եզդի) ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն, որ դավանում են նշված ուղղությանը:

Թվարկված կրոնական ուղղությունների ցանկում ներկայացված են նաև **«11»՝ Հեթանոսական**, **«12»՝ Մահմեդական**, **«13»՝ Հուդայական** ծածկագրերը, որոնք պետք է գրվեն այն անձանց համար, ովքեր կնշեն, որ հանդիսանում են համապատասխանաբար այդ ուղղության հետևորդներ:

«14»՝ Կրիշնյա գիտակցություն կամ Հարե կրիշնյա, **«15»՝ ՏՄ (Տրանսցենտրալ մեդիտացիա)** ծածկագրերը կգրվեն այն անձանց համար, ովքեր կնշեն, որ հանդիսանում են համապատասխան ուղղություններից որևէ մեկի հետևորդներ:

«16»՝ Այլ, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն կրոնական այլ ուղղություն, որը թվարկված չէ ցանկում:

«17»՝ Չի համարում, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կպատասխանեն, որ իրենք ոչ մի հավատքի չեն հարում կամ չեն դավանում (այդ թվում՝ «աթեիստներ»):

Երեխաների կրոնական դավանանքը որոշվում է ծնողների կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցադրման ձևաչափը, լինելով խիստ անձնական, կարող է ցանկալի չլինել որոշ անձանց համար, անգամ հնարավոր է, որ ոմանք ընդհանրապես հրաժարվեն պատասխանել այս հարցին այդպիսի դեպքերի համար նախատեսված է՝

«18»՝ Հրաժարվում է պատասխանել, ծածկագիրը:

Հ Ա Ր Ց 15.

ԱՐԴՅՈՔ (անունը) ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ ԱՆԸՆԴՀԱՏ Է ԲՆԱԿՎՈՒՄ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Ուշադրություն՝ Այս հարցի լրացման ժամանակ հաշվի չեն առնվում ծառայողական բոլոր գործուղումները, այդ թվում նաև ընթացիկ գործուղումը:

Եթե անձը ծննդյան օրվանից անընդհատ բնակվել է տվյալ բնակավայրում, ապա 15-րդ հարցում գրվում է «Այո» պատասխանին համապատասխանող «1» ծածկագիրը:

Ընդ որում բնակվելու անընդհատությունը չի խախտվում՝

ա. միևնույն տարածքի (նախկին վարչական շրջանի) սահմաններում մի գյուղական բնակավայրից մյուսը տեղափոխվելու դեպքում (օրինակ՝ անձը Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ծաղկաշեն գյուղից տեղափոխվել է նույն տարածաշրջանի Հարթավան գյուղ):

բ. քաղաքի/գյուղի սահմանում հասցեափոխության դեպքում,

գ. տվյալ բնակավայրից ժամկետային զինծառայության և արտերկիր կարճաժամկետ (մինչև 1 տարի) գործուղման մեկնելու դեպքում,

դ. **1 տարուց պակաս ժամկետով՝** տվյալ բնակավայրից բոլոր այն մեկնումների դեպքում, որոնք կապված չեն մշտական բնակավայրը փոխելու հետ (ծառայողական գործուղումներ, մեկնումներ հանգստի, հարազատների, բարեկամների և ծանոթների մոտ և այլն):

Մնացած բոլոր դեպքերում, այդ թվում՝ միևնույն տարածքի (նախկին վարչական շրջանի) սահմաններում **գյուղական բնակավայրից քաղաք**, կամ հակառակը (օրինակ՝ Մուղնի գյուղական բնակավայրից ք. Աշտարակ, կամ Աշտարակ քաղաքից Օշական գյուղ), ինչպես նաև մի **քաղաքից մեկ այլ քաղաք**, օրինակ՝ Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի Վեդի քաղաքից՝ Արարատ քաղաք, կամ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի Արմավիր քաղաքից՝ Մեծամոր և այլն, տեղափոխությունները խախտում են տվյալ բնակավայրում բնակվելու անընդհատությունը:

Բնակվելու անընդհատությունը կախված չէ գրանցման առկայությունից և դրա բնույթից (մշտական կամ ժամանակավոր) և այդ նույն բնակավայրի սահմաններում հասցեն փոխելուց:

Եթե անձը ծննդյան օրվանից անընդհատ չի բնակվում տվյալ բնակավայրում, ապա այդ դեպքում գրվում է «Ոչ»-ին համապատասխանող «2» ծածկագիրը:

Ուշադրություն՝

- 15-րդ հարցի «Այո»՝ «1», պատասխանի դեպքում պետք է անցում կատարել 20-րդ հարցին,
- «Ոչ»՝ «2», պատասխանի դեպքում անցում է կատարվում հաջորդող 16, 17, 18, 19-րդ հարցերի լրացմանը:

Հ Ա Ր Ց 16.

**ՏԱՐԵԹԻՎԸ, ՈՐԻՑ ՄԿՍԱԾ (անունը) ԱՆԸՆԴՀԱՏ
ԲՆԱԿՎՈՒՄ Է ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ**

Այս հարցի համար նախատեսված պոնակում գրվում է տարեթիվը (օրինակ՝ 1946, 1981, 2000 և այլն), որից սկսած հարցվողն անընդհատ բնակվում է տվյալ բնակավայրում: Տվյալ բնակավայրից այլ բնակավայր մշտական բնակության մեկնած անձանց համար, ովքեր նորից ետ են վերադարձել, նշվում է վերադառնալու տարեթիվը, որից սկսած նրանք անընդհատ բնակվում են այդ բնակավայրում:

Հ Ա Ր Ց 17.

Ո՞ՐՆ Է (անունը) ՆԱԽՈՐԴ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Եթե հարցվողի նախորդ բնակության վայրը եղել է Հայաստանի տարածքում, ապա հարցի պատասխանի գրառման համար նախատեսված առաջին տողում գրվում է ՀՀ համապատասխան մարզի (Արմավիր, Սյունիք և այլն), իսկ երկրորդ տողում՝ ՀՀ համապատասխան բնակավայրի անվանումները:

Օրինակ՝

Կոտայք
գ. Բուժական

Արտերկրից եկածների համար (այդ թվում՝ ԱՊՀ երկրներից) լրացվում է այն երկրի անվանումը, որտեղ նախկինում (մինչև տվյալ բնակավայր տեղափոխվելը) բնակվել է հարցվողը:

Հ Ա Ր Ց 18.

Ի՞ՆՉ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ Է ԵԿԵԼ (անունը) ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԹԵ՞ ԳՅՈՒՂԱԿԱՆ

Եթե հարցվողի նախորդ բնակության վայրը եղել է քաղաքային համայնք, ապա նշվում է «1», իսկ գյուղական համայնքից եկողների համար նշվում է «2» ծածկագիրը:

Հ Ա Ր Ց 19.

Ո՞ՐՆ Է (անունը) ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

19-րդ հարցի պատասխանների հնարավոր տարբերակները նշված են սյունակից ուղղորդող սլաքի ուղղությամբ տեղադրված վանդակում:

«1»՝ Այլ երկրներից պատերազմական գործողությունների հետևանքով, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում մշտական բնակավայրը փոխելու հիմնական պատճառը հանդիսացել է տվյալ երկրում ծավալված պատերազմական գործողությունները, ինչպես նաև համատարած բռնությունները, մարդու իրավունքի զանգվածային խախտումները:

«2»՝ Այլ երկրներից բռնությունների և հալածանքի վտանգի հետևանքով, գրվում է ռասսայական, ազգային, կրոնական պատկանելիության, սոցիալական որևէ խմբին անդամակցության կամ քաղաքական հայացքների համար հալածանքի ենթարկվելու հիմնավոր վախի հետևանքով այլ երկրներից ՀՀ տեղափոխված անձանց համար:

«3»՝ Ընտանեկան, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր բնակության վայրը փոխել են իրենց ընտանիքի հետ վերամիավորվելու կամ ընտանիք կազմելու նպատակով:

«4»՝ Հայրենադարձություն, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր մշտական բնակության վայրը փոխել են իրենց հայրենիք վերադառնալու նպատակով:

«5»՝ Այլ, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր նշել են բնակության վայրը փոխելու այլ պատճառներ, քան վերը թվարկվածները:

Հ Ա Ր Ց 20.

Ո՞ՐՆ Է (անունը) ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐԸ

Այս հարցի պատասխանների հնարավոր տարբերակներից ընտրվում է յուրաքանչյուր անձի գոյության միջոցին համապատասխանող ծածկագիրը:

«01»՝ Վարձու աշխատանք, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի հիմնական աղբյուրը դրամական արտահայտությամբ (կամ բնաիրային փոխհատուցմամբ) աշխատավարձն է կամ դրան համարժեք այլ միջոցները, կամ

եկամտաբեր զբաղմունքը՝ անկախ գործունեության դիմաց վարձատրման կամ եկամտի ստացման ժամկետից:

«03»՝ Ինքնագրադավածություն այլ ոլորտներում, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցը ձևավորվում է **տնտեսության այլ ոլորտներում** (բացառությամբ գյուղացիական) *գործունեության* արդյունքում:

«04»՝ Եկամուտ սեփականությունից, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, **ուլ գոյության միջոցի հիմնական աղբյուրը ձևավորվում է**.

ա. իրենց դրամական ավանդների, վարկերի տրամադրման, փոխառությունների օգտագործման և այլնի դիմաց ստացված եկամտից,

բ. իրացված բաժնետոմսերի փոխարժեքի տարբերությունից և նման այլ ձևերով ստացված շահաբաժիններից,

գ. վարձակալության տրված հողամասի, գույքի (անշարժ և շարժական) դիմաց ստացված եկամտից՝ վարձավճարի ձևով,

դ. բնաիրային (ոչ դրամական) ձևով ստացված եկամտից:

«05»՝ Վարկերի, խնայողությունների օգտագործում և կապիտալի (այդ թվում նաև գույքի) վաճառք (իրացում), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում համար գոյության միջոցի աղբյուր է հանդիսանում վարկերի (սպառողական) օգտագործումը, ակտիվների վաճառքը կամ խնայողությունների օգտագործումը:

«06»՝ Կենսաթոշակ, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի հիմնական աղբյուրը հանդիսանում է **կենսաթոշակը (սոցիալական, ապահովագրական և զինծառայության հետ կապված)**՝ տարիքային, հաշմանդամության (ընդհանուր հիվանդությունների, աշխատանքային խեղման և մասնագիտական հիվանդության հետևանքով), կերակրողին կորցնելու (մեկ կամ երկու), երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով (4 և ավել երեխա ունեցող մայրերի, մանկուց հաշմանդամ երեխա խնամող մայրերի), զինծառայության հետ կապված հաշմանդամ կենսաթոշակատուներին (զինծառայության ժամանակ հաշմանդամ դարձած, հայրենական պատերազմի հաշմանդամներ և նրանց հավասարեցված անձինք, զոհված զինծառայողների գծով կենսաթոշակ ստացող ընտանիքների, ներառյալ պատերազմում):

Կերակրողին կորցնելու դեպքում երեխաներին նշանակված կենսաթոշակը նշվում է երեխաների, այլ ոչ թե մոր կամ հոր համար, եթե նույնիսկ նրանք համարվում են այդ կենսաթոշակը ստացողները, իսկ ընտանիքի համար նախատեսված կենսաթոշակը գրվում է այն անձի համար, ով ստանում է այն (օրինակ՝ զոհված զինծառայողների ընտանիքին նշանակված կենսաթոշակը):

«07»՝ Նպաստ պետական մարմնից, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի աղբյուրը հանդիսանում է պետության կողմից նշանակված նպաստի ցանկացած տեսակը (օրինակ՝ ընտանեկան նպաստ, գործազրկության, երեխայի խնամքի նպաստ, Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ «Մարտական խաչ» շքանշանով հետմահու պարգևատրված ընտանիքի նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ):

«08»՝ Նպաստ ոչ պետական աղբյուրից, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի աղբյուրը հանդիսանում է ոչ պետական որևէ աղբյուրից ստացվող նպաստը:

«09»՝ Կրթաթոշակ, ծածկագիրը գրվում է կրթաթոշակ ստացող սովորողներին՝ անկախ նրանից այն նշանակված է պետության, գործատուի, թե այլ բարեգործական կառույց(ներ)ի կողմից:

«10»՝ Պետական ապահովության (պահպանության) ներքո, ծածկագիրը նշվում է պետության լրիվ խնամքի տակ գտվող և խնամակալական կազմակերպություններում

(ծերանոցներ և մանկատներ), գիշերօթիկ դպրոցներում սովորողների, ինչպես նաև պետական ապահովության տակ գտնվող այլ անձանց համար (օրինակ՝ զորամասերում, ազատագրված վայրերում գտնվող):

«12»՝ **Դրամական օգնություն պետական աղքատից**, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի հիմնական աղբյուրը պետական (այդ թվում՝ համայնքային) աղբյուրներից ստացված դրամական օգնությունն է՝ աշխատանքի հետ առնչություն չունեցող հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև հեղինակային վարձատրությունը (բացի ռոյալթիներից):

«13»՝ **Դրամական օգնություն արտերկրում բնակվող հարազատներից, բարեկամներից, ծանոթներից**, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի հիմնական աղբյուրն արտերկրում (այդ թվում նաև ԱՊՀ երկրներում) բնակվող հարազատներից, բարեկամներից, ծանոթներից պարբերաբար ստացվող անհատույց դրամական միջոցներն են:

«14»՝ **Դրամական օգնություն Հայաստանում բնակվող հարազատներից**, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում գոյության միջոցի աղբյուրը Հայաստանում բնակվող իր հարազատի կողմից տրամադրված դրամական միջոցն է:

«15»՝ **Խնամքի տակ**, ծածկագիրը գրվում է տնային տնտեսության այն անդամ(ներ)ի համար, ովքեր ապրում են տնային տնտեսության մյուս անդամների, ազգականների կամ այլ անձանց դրամական միջոցներով, կամ նրանց կողմից տրամադրված բնամթերքով: Նաև նրանց համար, ում նշանակված է ալիմենտ, ընդ որում, եթե ալիմենտը նշանակված է անչափահաս երեխա(ներ)ի համար, սակայն այն վճարվում է նրա/նրանց մորը կամ հորը, ապա ծածկագիրը նշվում է երեխա(ներ)ի համար, այլ ոչ թե մոր կամ հոր:

«16»՝ **Այլ աղբյուր**, ծածկագիրը գրվում է միայն այն անձանց համար, ում գոյության միջոցի աղբյուրը վերը թվարկված չէ:

Հ Ա Ր Ց 21.

Ո՞ՐՆ Է (անունը) ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

ԱՅՍ ՀԱՐՑԸ ՏՐԿՈՒՄ Է 6 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ, ԵՎ ԳՐՎՈՒՄ Է ՀԱՐՑՎՈՂ ԱՆՁԻ՝ ՀԱՇՎԱՌՍՄԱՆ ՊԱՀԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

«01»՝ **Չունի տարրական կրթություն**, ծածկագիրը գրվում է 6 և բարձր տարիքի (ինչպես սովորող, այնպես էլ չսովորող) տարրական կրթություն չունեցող, սակայն որևէ լեզվով գրել, կարդալ կամ միայն կարդալ (թեկուզ ոչ վարժ) իմացող անձ(անց)ի համար, ինչպես նաև նրան/ց՝ ով/քեր կարող է/են միայն կարդալ, սակայն գրել չի/չեն կարող, կամ կարող է/են գրել կամ կարդալ միայն սովորած ծիսական արտահայտությունը:

«02»՝ **Տարրական կրթություն**, ծածկագիրը գրվում է տարրական դասընթացը կամ տարրական դպրոցն ավարտածների համար:

«03»՝ **Հիմնական կրթություն**, ծածկագիրը գրվում է հիմնական հանրակրթական դպրոցն ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած անձանց համար:

«04»՝ **Միջնակարգ կրթություն**, ծածկագիրը գրվում է միջնակարգ հանրակրթական դպրոց (այդ թվում՝ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ), վարժարան, գիմնազիա և միջնակարգ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ ավարտածների համար:

«05»՝ **Նախնական մասնագիտական (արհեստագործա-կան)**, ծածկագիրը գրվում է հիմնական ընդհանուր/ հանրակրթական և միջնակարգ ընդհանուր/հանրակրթական կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթություն ստացած (արհեստագործական, պրոֆտեխնիկա-կան, ճյուղային պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնարաններ ավարտած) և համապատասխան ավարտական վկայական ստացած անձանց համար:

«06»՝ Միջին մասնագիտական, ծածկագիրը գրվում է տեխնիկում, քոլեջ կամ դրանց հավասարեցված այլ պետական և ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (մանկավարժական, բժշկական ուսումնարան և այլն) ավարտած և միջին մասնագիտական որակավորում և համապատասխան ավարտական վկայական ստացած անձանց համար:

«07»՝ Բարձրագույն մասնագիտական (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), ծածկագիրը գրվում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա, ավարտածների համար: «Բարձրագույն մասնագիտական» գրվում է բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի աստիճան ստացած անձանց համար:

«08»՝ Հետբուհական մասնագիտական, ծածկագիրը գրվում է ասպիրանտուրա, ինտերնատուրա և օրդինատուրա ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած անձանց համար:

Գիտական աստիճան ստացած անձանց համար գրվում է «09»՝ Գիտության թեկնածու, կամ «10»՝ Գիտության դոկտոր, հուշումներից մեկին համապատասխանող ծածկագիրը:

Արտերկրում կրթություն ստացածների համար գրվում է թվարկված կրթական այն մակարդակի ծածկագիրը, որը համապատասխանում է իրենց ստացած ավարտական վկայականին:

Հեռակա և դրսեկային կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ավարտելը, ինչպես նաև էքստեռնատը հավասարեցվում է համապատասխան ուսումնական հաստատություն (կամ համապատասխան ուսումնական ծրագրեր) ավարտելուն:

Ընդհանուր կրթություն չսովոր ուսումնական հաստատություններում սովորողների և ավարտածների համար (օրինակ՝ վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ և այլն) նշվում է այն կրթությունը, որը նրանք ստացել են մինչ այդ դասընթացներ հաճախելը:

Հ Ա Ր Ց 23.

ԱՐԴՅՈ՞Ք (անունը) ՍՈՎՈՐՈՒՄ Է ՈՐԵՎԷ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Եթե անձը նշում է, որ սովորում է որևէ ուսումնական հաստատությունում, ապա հաշվարարը գրում է 23-րդ հարցի պատասխանների ցանկում թվարկված «1»-«7» ծածկագրերից որևէ մեկին համապատասխանող նիշը՝ ըստ ստացված պատասխանի:

Ցերեկային, հեռակա և դրսեկային ուսուցմամբ կրթական ծրագրով (ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ուսումնական հաստատություններում) սովորողների համար, անկախ նրանից՝ սովորում են նրանք արտադրությունից կտրված կամ առանց կտրվելու, գրվում է պատասխանների համար առաջարկված հուշումներից որևէ մեկին համապատասխանող նույնականացման ծածկագիրը:

«1»՝ Տարրական դպրոց, ծածկագիրը գրվում է 1-4-րդ դասարաններում սովորողների համար:

«2»՝ Միջին դպրոց, ծածկագիրը գրվում է 5-9-րդ դասարաններում սովորողների համար:

«3»՝ Ավագ դպրոց, ծածկագիրը գրվում է 10-12-րդ դասարաններում սովորողների համար:

«4»՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական), ծածկագիրը գրվում է հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր հանրակրթական կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ) ուսումնական հաստատություններում, քրեակատարողական կենտրոններում սովորողների համար:

«5»՝ Միջին մասնագիտական, ծածկագիրը գրվում է պետական և ոչ պետական տեխնիկումներում, քոլեջներում և դրանց հավասարեցված միջին մասնագիտական կրթական

ծրագրեր իրականացնող այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (մանկավարժական, բժշկական, տնտեսագիտական քոլեջ և այլն) սովորողների համար:

«6»՝ Բարձրագույն մասնագիտական, ծածկագիրը գրվում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում (ինստիտուտներում, ակադեմիաներում, համալսարաններում, կոնսերվատորիայում և դրանց հավասարեցված բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններում) սովորողների համար:

«7»՝ Հետբուհական մասնագիտական, ծածկագիրը գրվում է ուսումնական կենտրոններում՝ ԲՈՒՀ-երի, գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում համապատասխան կրթական ծրագրերով, ինչպես նաև դոկտորանտի ծրագրով սովորող անձանց համար:

Եթե 6 և բարձր տարիքի անձը չի սովորում որևէ ուսումնական հաստատությունում, ապա այդ դեպքում գրվում է **«Չի սովորում»** տարբերակին համապատասխանող **«8»** ծածկագիրը:

Հ Ա Ր Ց 24 (ա,բ).

ՈՐՆ Է (անունը) ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՀԱՐՅԸ ԼՐԱՑՎՈՒՄ Է 15 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

«Սյունակ 24 ա» Ամուսնական կարգավիճակը

24-րդ հարցի պատասխանի լրացման համար նախատեսված է 2 սյունակ, և հաշվարարն, օգտվելով հարցի համար նախատեսված սյունակից ուղղորդող սլաքի ուղղությամբ առկա վանդակում որպես հնարավոր պատասխաններ թվարկված ամուսնական կարգավիճակների ցանկից, համապատասխան թվային ծածկագիրը գրում է տվյալ անձի համար նախատեսված տողի **«24ա»** սյունակում:

«1»՝ Երբևէ չամուսնացած, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր կնշեն, որ երբևէ ամուսնացած չեն եղել:

«2»՝ Ամուսնացած (գրանցված), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր մարդահամարի պահին ամուսնացած են, և նրանց ամուսնությունը գրանցված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում (այսուհետև՝ ՔԿԱԳԳ, նախկինում՝ զագս):

«3»՝ Ամուսնացած փաստացի (առանց գրանցման), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր փաստացի ամուսնացած են, սակայն նրանց ամուսնությունը գրանցված չէ ՔԿԱԳԳ-ում:

«4»՝ Միայն եկեղեցու կանոնական ծեսով իրագործած ամուսնություն, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում ամուսնությունը գրանցված է միայն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կողմից իրագործված ծեսով: Եթե ամուսնությունը գրանցվել է ոչ միայն եկեղեցու, այլ նաև ՔԿԱԳԳ մարմնի կողմից, ապա պետք է նշել **«2»** ծածկագիրը:

«5»՝ Այրի/կնակորույս, ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում ամուսնությունը (անկախ նրանից ամուսնությունը գրանցված է եղել ՔԿԱԳԳ-ում, թե ոչ) դադարել է ամուսիններից մեկի մահվան հետևանքով, և նրանք նոր ամուսնական կապի մեջ չեն մտել:

«6»՝ Ամուսնալուծված (գրանցված), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ում ամուսնությունը գրանցված է եղել ՔԿԱԳԳ-ում և/կամ **եկեղեցու կանոնական ծեսով**, սակայն հաշվառման պահի դրությամբ այդ անձինք ամուսնալուծված են, և այդ փաստը ևս գրանցված է ՔԿԱԳԳ մարմնի կողմից կամ հռչակված է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու կողմից:

«7»՝ Բաժանված փաստացի (առանց գրանցման), ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր, որպես ամուսիններ, փաստացի ապրում են իրարից առանձին, բայց նրանց բաժանությունը գրանցված չէ ՔԿԱԳԳ մարմինների կողմից:

«Սյունակ 24բ»

Նշել ամուսնու/կնոջ հերթական համարը «Ա» սյունակից

Այս հարցի պատասխանը հաշվարարը լրացնում է առանց լրացուցիչ հարցման՝ միայն ամուսնացած անձանց համար: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում՝ ամուսնու համար «24բ» սյունակում գրվում է կնոջ, իսկ կնոջ համար՝ ամուսնու հերթական համարը, որը նշված է մարդահամարի հարցաթերթի «Ա» սյունակում:

Հ Ա Ր Ց 25 (ա,բ)

ԱՅՍ ՀԱՐՑԸ ՏՐՎՈՒՄ Է ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻԱՅՆ 15 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ՝ ԱՆԿԱՆ ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՇԵԼ

25-րդ հարցի պատասխանի լրացման համար նախատեսված է 2 սյունակ:

«Սյունակ 25ա»

Նշել կենդանածին երեխաների քանակը

15 և բարձր տարիքի իգական սեռի ներկայացուցիչների համար (անկախ մարդահամարի պահին նրանց ամուսնական կարգավիճակից) անհրաժեշտ է հարցնել և **«25ա»** սյունակի համապատասխան տողում գրել կենդանածին երեխաների ընդհանուր թվաքանակը (չհաշվելով մեռելածինները), անկախ նրանից՝ բոլոր երեխաները հաշվառման պահին ողջ են, թե ոչ, և գտնվում են արդյոք նրանք տվյալ տնային տնտեսության կազմում, թե ապրում են առանձին: Ընդ որում, որդեգրած և խնամակալված երեխաները, ինչպես նաև ամուսնու նախկին ամուսնությունից ունեցած երեխաները, տվյալ կնոջ ծննդաբերած երեխաների **թվաքանակի մեջ չեն ներառվում**: Եթե իգական սեռի ներկայացուցիչը չունի կենդանածին երեխա, ապա **«25ա»** սյունակում անհրաժեշտ է գրել **«0»**:

«Սյունակ 25բ»

Նշել, թե կենդանածին երեխաներից քանիսն են ողջ

Կնոջ կենդանածին երեխաների ընդհանուր թվաքանակից **«25բ»** սյունակի համապատասխան տողում գրվում է մարդահամարի հաշվառման պահի դրությամբ տվյալ կնոջ ողջ երեխաների թվաքանակը:

Եթե նրա ծնած երեխաներից մարդահամարի պահին ոչ մի երեխա ողջ չի մնացել, ապա գրվում է՝ **«0»**:

Եթե **«25ա»** սյունակում գրվել է **«0»**, ապա **«25բ»**-ում առանց հարցման ևս պետք է գրվի **«0»**:

26- 33 ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 15-75 (ներառյալ) ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Հ Ա Ր Ց 26.

ԱՐԴՅՈՔ (անունը) ՈՒՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՄ ԵԿԱՍՏԲԵՐ ԶԲԱՂՄՈՒՆՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՀԻՑ ՄԵՎ ՇԱԲԱԹ ԱՌԱՋ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-11-Ը (ՆԵՐԱՌՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ)

«Այո» պատասխանին համապատասխանող **«1»** ծածկագիրը գրվում է այն անձանց համար, ովքեր **2011թ. հոկտեմբերի 4-11-ը** ունեցել են աշխատանք կամ եկամտաբեր գրադմունք, կատարել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք

Ոչ՝ **«2»**, ծածկագիրը գրվում է **2011թ. հոկտեմբերի 4-11-ը** աշխատանք կամ եկամտաբեր գրադմունք չունեցող անձանց համար:

Հ Ա Ր Ց 27.

Ո՞ՐՆ Է (անունը) ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԻՄՆԱՐԿԻ (ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ (ԹՈՂԱՐԿՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԿԱՍ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ) ԵՎ/ԿԱՍ ԴՐԱ ԼՐԻՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Այս հարցի պատասխանը լրացվում է **2011թ. հոկտեմբերի 4-11-ը** աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունեցած անձանց համար (ուս 26-րդ հարցում նշվել է «1»):

Պետական կառավարման մարմնի (նախարարության, պետական ծառայության, քաղաքապետարանի, գյուղապետարանի, պետական որևէ կոմիտեի կամ դրա տարածքային ստորաբաժանման) աշխատակից է, ապա գրվում նշված պետական մարմնի լրիվ անվանումը:

Ժամկետային զինծառայողների համար գրվում է՝ *«Պաշտպանության գործունեություն»:*

Հ Ա Ր Ց 28.

Ո՞ՐՆ Է (անունը) ԶԲԱՂՄՈՒՆՔԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ ԿԱՍ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

2011թ. հոկտեմբերի 4-11-ը աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունեցած բոլոր անձանց համար (ուս համար 26-րդ հարցում նշված է «Այո»-ին համապատասխանող «1» ծածկագիրը) գրվում է նրանց զբաղմունքի, զբաղեցրած պաշտոնի կամ կատարած աշխատանքի մանրամասն նկարագրությունն այն աշխատավայրում, որը նշված է **27-րդ հարցում:**

Զբաղմունքը և(կամ) զբաղեցրած պաշտոնը *պետք է գրել մանրամասն՝ նշելով կատարած աշխատանքի բնույթը:*

Հ Ա Ր Ց 29.

Ո՞ՐՆ Է (անունը) ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հարցը լրացվում է անձի զբաղվածության կարգավիճակին համապատասխանող թվային ծածկագիրը գրառելով:

«1»՝ Վարձու աշխատող, նշվում է այն անձանց համար, ովքեր աշխատել են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստացել են դրամական և/կամ բնափրային փոխհատուցում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ:

Տնօրենները, կառավարիչները և այլ ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձինք, ովքեր ստացել են աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ, այլ ոչ թե եկամուտ գործունեությունից, համարվում են վարձու աշխատողներ, թեև կարող են և հաճախ էլ կատարում են նույն գործառույթները, ինչ գործատուն:

«2»՝ Գործատու, համարվում են այն անձինք, ովքեր ինքնուրույնաբար կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարել են սեփական բիզնեսը և մշտապես վարձում են մեկ կամ ավելի աշխատողներ:

«3»՝ Ինքնազբաղված գյուղացիական տնտեսությունում, այն անձինք են, ովքեր զբաղված են գյուղացիական տնտեսությունում եկամտաբեր գործունեությամբ, ինքնուրույն՝ առանց աշխատողների ներգրավման, կամ եթե նույնիսկ ներգրավում են աշխատողներ, ապա այն չի կրում մշտական բնույթ (օրինակ՝ սեզոնային աշխատանքների եռուն շրջանում ժամանակավորապես կարող է ներգրավել վարձու աշխատուժ):

«4»՝ Ինքնազբաղված այլ գործունեությամբ սեփական գործ ունեցած այն անձինք են, ովքեր ինքնուրույն զբաղված են եղել եկամտաբեր ոչ գյուղատնտեսական գործունեությամբ՝

առանց աշխատողների ներգրավման, կամ եթե նույնիսկ ներգրավում են աշխատողներ, ապա այն չի կրում մշտական բնույթ:

«5»` Ընտանիքի օժանդակող անդամ, նշվում է այն անձանց համար, ովքեր աշխատել են ընտանիքի կամ տնային տնտեսության ինքնազբաղված անդամին (ազգականին, բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում) օգնելու, օժանդակելու նպատակով և չեն ստացել դրամական և/կամ բնաիրային փոխհատուցում, եթե զբաղված են եղել նույն գործունեությամբ, ինչով զբաղվել է ինքնազբաղված անդամը:

«6»` Արտադրական/սպառողական կոոպերատիվի անդամ, համարվում են այն անձինք, ովքեր աշխատել են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման կոոպերատիվում և հանդիսացել են ակտիվ (աշխատող) անդամ, մյուս անդամների հետ հավասար իրավունքով մասնակցել են արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության անդամների միջև եկամուտների բաշխմանը:

«7»` Այլ կարգավիճակ, նշվում է այն անձանց համար, ում զբաղվածության կարգավիճակը թվարկված դասակարգումներից ոչ մեկում հնարավոր չէ ներառել:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ 30-33, ինչպես նաև` Բ և Գ ԲԱԺԻՆՆԵՐԸ և Դ.1 հարցը ՉԵՆ ԼՐԱՑՎՈՒՄ:

ԲԱԺԻՆ Դ. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Հ Ա Ր Ց Դ.2.

**ՎԵՐՋԻՆ 12 ԱՄԻՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է/ԵՆ ԱՐԴՅՈ՞Ք**

Հարցի նպատակն է պարզել, թե վերջին 12 ամիսների ընթացքում տնային տնտեսությունում քանի ծննդյան ու մահվան դեպքեր են տեղի ունեցել և արդյո՞ք իրականացվել է դրանց գրանցումը Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից:

2.1. Կենդանի ծնունդ (ներ)

Եթե տնային տնտեսությունում վերջին 12 ամիսների ընթացքում տեղի է/են ունեցել կենդանի ծնունդ/ներ, այսինքն տնային տնտեսության անդամների կազմում կա/ն մինչև մեկ տարեկան երեխա/ներ, (այն է 9դ սյունակում առկա է/են 0 տարեկան/ներ), ապա **Դ.2. հարցի «2.1. Կենդանի ծնունդ/ներ»** տողի հնարավոր պատասխաններից գծանշվում է **«Այո»** պատասխանին համապատասխանող վանդակը` **«X»** նշան գրելով, **իսկ եթե չկա(ն) կենդանի ծնունդներ** (այն է 9դ սյունակում առկա չէ(են) 0 տարեկան/ներ), **ապա** գծանշվում է 2.1. տողի **«Ոչ»** պատասխանին համապատասխանող վանդակը:

Այո պատասխանի դեպքում պետք է պարզել, գրանցված են արդյո՞ք ծնունդները, այսինքն` արդյո՞ք նրա(նց) վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳԳ, նախկինում` զագս) տարածքային մարմիններում կազմվել է/են «ծննդյան վերաբերյալ ակտ/եր»` ծնողներին տալով երեխայի «ծննդյան վկայական/ներ»:

Նման դեպք(եր)ը համարվում է/են գրանցում ստացած և որպես պատասխան լրացվում է **«2.1.1. Այո, գրանցված է ՔԿԱԳ գործակալությունում»** համապատասխանող վանդակը` գրառելով այդպիսի կենդանի ծնունդ(ներ)ի թիվը, օրինակ` 3, իսկ եթե կենդանի ծնունդի վերաբերյալ դեռևս վերոհիշյալ գրանցում(ներ)ը չի/չեն կատարվել, ապա որպես պատասխան ընտրվում է **«2.1.2. Այո, գրանցված չէ ՔԿԱԳ գործակալությունում»** տարբերակին համապատասխանող վանդակը` գրառելով չգրանցված դեպք(եր)ի թիվը:

2.2. Մահվան դեպք(եր)

Եթե տնային տնտեսությունում վերջին 12 ամիսների ընթացքում տեղի է/են ունեցել մահվան դեպք/եր, ապա Դ.2. հարցի **«2.2. Մահվան դեպք(եր)»** տողի հնարավոր

պատասխաններից **գծանշվում է «Այո»** պատասխանին համապատասխանող վանդակը՝ «X» նշանը գրելով, **իսկ եթե չկան մահվան դեպքեր, ապա** գծանշվում է 2.2. տողի «Ոչ» պատասխանին համապատասխանող վանդակը:

«Այո» պատասխանի դեպքում պետք է պարզել՝ գրանցված են արդյոք մահվան դեպք(եր)ը, այսինքն՝ դրանց վերաբերյալ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳ գործակալությունում, նախկինում՝ զագս) տարածքային մարմիններում լրացվել է/են «մահվան վերաբերյալ ակտ/եր», և տրվել է «մահվան վկայական/ներ»: Տվյալ դեպք(եր)ը համարվում է/են գրանցում ստացած և որպես պատասխան լրացվում է՝ **«2.2.1. Այո, գրանցված է ՔԿԱԳ գործակալությունում»** համապատասխանող վանդակը՝ գրառելով մահվան դեպք(եր)ի թիվը, օրինակ՝ 1 կամ 2: Եթե մահվան դեպք(եր)ի վերաբերյալ դեռևս վերոհիշյալ գրանցում(ներ)ը չի/չեն կատարվել, ապա որպես պատասխան ընտրվում է **«2.2.2. Այո, գրանցված չէ ՔԿԱԳ գործակալությունում»** տարբերակին համապատասխանող վանդակը՝ գրառելով այդպիսի չգրանցված դեպքերի թիվը:

2.2.1. և 2.2.2. պատասխաններում դեպք/երի թիվը գրելուց հետո պետք է անցում կատարել մահացած(ներ)ի սեռի վերաբերյալ տվյալ(ներ)ի լրացմանը՝ յուրաքանչյուրին համապատասխանող վանդակ(ներ)ում գրառելով դեպքերի թիվը, այնուհետև նախատեսված վանդակ(ներ)ում (երեքական վանդակ տղամարդկանց և կանանց դեպքում) գրառվում է յուրաքանչյուրի տարիքը՝ լրացած տարիների թիվը մահվան ժամանակ:

ՀԱՐՑ Դ.3.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԿԱՆ ԱՐԴՑՈՔ, ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՏՐՎԱԾ, ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ/ԻՆՔ

Հաշմանդամությունը՝ օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալա-կան անբավարարություն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամ են համարվում օրենքով սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձիք: Սահմանվում է հաշմանդամության I, II, III խումբ կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ մինչև 18 տարեկան անձանց: Դրա հիման վրա քաղաքացուն տրվում է համապատասխան համարակալված տեղեկանք, որում նշվում է հաշմանդամության խումբը և ժամկետը, ինչպես նաև **Սոցիալական ապահովության պետական ծառայության** կողմից տրված կենսաթոշակի վկայական: Մինչև 2002 թվականը հաշմանդամություն սահմանող իրավասու մարմիններ են հանդիսացել բժշկաաշխատանքային փորձաքննական հանձնաժողովները (ԲԱՓՀ), իսկ 2002 թվականից առ այսօր՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները (ԲՍՓՀ):

Եթե տնային տնտեսության կազմում կա/ն օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձ/ինք, ապա ընտրվում է այս հարցի համար նախատեսված **«3.1. Այո» պատասխանը, և** կից վանդակում նշվում է այդպիսի անձ(անց)/ի թվաքանակը: Այնուհետև **լրացվում է** այդ անձ(անց)/ի հերթական համար(ներ)ը՝ ըստ տնային տնտեսության հարցաթերթի «Ա» սյունակի, որի համար նախատեսված է լրացման 3 հնարավորություն այն դեպք(եր)ի համար, երբ տնային տնտեսության կազմում կլինեն հաշմանդամության կարգավիճակ ունեցող մեկից ավել անձ/ինք:

Օրինակ՝ եթե տնային տնտեսության կազմում առկա է հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձ, և նրա հերթական համարը տնային տնտեսության հարցաթերթի «Ա» սյունակում 4-րդն է, ապա հարցի լրացման համար նախատեսված 3.1. տողի թվաքանակը վանդակում գրվում է 1 (այսինք՝ կա մեկ անձ), իսկ հաջորդող 3 վանդակներից առաջինում՝ 4, քանի որ տնային տնտեսության անդամների կազմում նրա հերթական համարը 4-ն է:

Եթե տնային տնտեսության կազմում չկա/ն հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձ/ինք, **ապա 3.2. կետին կից վանդակում դրվում է X նշան:**

Յուրաքանչյուր տնային տնտեսության համար կազմված հարցաթերթում այս հարցի պատասխանում պարտադիր պետք է **որևէ նշում կատարված լինի՝** կամ 3.2. վանդակում նշագրված, կամ 3.1. և դրանից հետևող այդ տողի մյուս վանդակներում՝ համապատասխան թիվ գրված:

Երբեմն հնարավոր է անձ/ինք շփոթեն հաշման-դամությունը զինվորական ծառայությունից հիվանդության պատճառով ազատման հետ կամ ընդհանրապես առկա հիվանդության հետ: Հնարավոր է նաև, որ անձը նախկինում ունեցել է հաշմանդամի կարգավիճակ, սակայն ներկայումս չունի, բայց ինքն իրեն հաշմանդամ է համարում: Նման դեպքերում, եթե հաշվարարի մոտ կասկած է առաջանում անձի պատասխանի հավաստիության վերաբերյալ, կամ վերը նշված շփոթմունքները բացառելու տեսանկյունից, կարելի է լրացուցիչ հարցման միջոցով պարզել, թե արդյոք ներկայումս քաղաքացին ստանում է հաշմանդամության կենսաթոշակ կամ խնդրել, որ ցույց տա հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքը՝ որով հնարավոր կլինի ճշտել հաշմանդամության ժամկետը: